«Քայլ առ քայլ» բարեգործական

հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության
մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և
հմտությունների զարգացման»
ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
# ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտում և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճշգրիտ կազմակերպում»

Դաստիարակ՝ Մարիետա Զաքարյան
Մանկապարտեզ՝ «Երազանք մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Առաջին գլուխ 5
3. Երկրորդ գլուխ 9
4. Եզրակացություն 11
5. Գրականության ցանկ 12

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կա սխալ կարծիք, թե ներառական կրթությունը նախատեսված է միայն ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն համակարգի խորքային ընկալումը փաստում է, որ ներառականությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկությունների վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքների ապահովումը[1]: Եվ ինչպես նշում է ամերիկացի ժամանակակից տեսաբան, հասարակական գործիչ Լիզա Ֆրիդմենը, «Ներառականությունը մտածողություն է, այն հնարավորություն է սովորել միասին և միմյանցից[2]»:

Ընդունելով և իրագործելով այս գաղափարախոսությունը հնարավոր կդառնա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովել ներգրավված միջավայր, մասնակցության, համագործակցության և հավասարության ցուցանիշներ:

**Հետազոտության նպատակը:** Նշյալ թեմայով հետազոտական աշխատանք գրելու նպատակն է ուսումնասիրել և բացահայտել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը և իրականացումը նախադպրոցական հասակի երեխաների հետ:

**Վարկած:** Ենթադրվում է, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար անհրաժեշտ է ունենալ նախնական պատկերացում տվյալ երեխայի առանձնահատուկ կարիքների մասին, կարողանալ դրանք համապատասխանեցնել նրա տարիքային խմբին բնորոշ որոշ չափորոշչային ցուցանիշների: Եթե հնարավոր լինի ապահովել մրցակցային, հավասարության և համագործակցության պայմաններ, ապա հնարավորություն կստեղծվի ԿԱՊԿՈՒ

[1] Վորլդ Վիժն Հայաստան,ԿԱՊԿՈՒ երեխաների հոտ աշխատանք, 2018թ, էջ 14
[2] Վիքիպեդիա, Լիզա Ֆրիդմեն

երեխաներին ներառել կրթադաստիարակչական գործընթացին՝ ելնելով նրա կարողություններից:

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրել եմ մի շարք տեսություններ ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունների, նրանց կրթադաստիարակչական գործընթացում ներգրավված լինելու անհրաժեշտության և հնարավոր մեթոդների մասին, ուսումնասիրվել են ժամանակակից տեսաբաններ Էշլի Բրուքսի և Ջին Ուիլիսի մոտեցումները ներառական կրթական համակարգի անհրաժեշտության վերաբերյալ: Կազմվել է խոսքի զարգացման պարապմունքի պլանավորում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցությամբ:

**Արդիականությունը:** Ներառական կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն է իր հասակակիցների միջավայրում: ԿԱՊԿՈՒ երեխաներն ունեն կրթություն ստանալու իրավունք այնպես, ինչպես և մնացածը: Նրանք չպետք է մեկուսացած լինեն: Դա հնարավորություն կտա նրանց սոցիալականացվել հասակակիցների հետ, զգալ իրենց լիարժեք մարդ և դրսևորվել այնպես, ինչպես կան: Եվ քանի որ տարեցտարի ավելանում են ԿԱՊԿՈՒ երեխաների թիվը, առաջնային խնդիր պետք է լինի ՆՈՒՀ-ում միջավայրային հարմարեցումը և մանկավարժահոգեբանական ռեսուրսների ճիշտ օգտագործումը: Ցավոք, այսօր Հայաստանում ոչ բոլոր ՆՈՒՀ-երն են իրենց ֆիզիկական միջավայրով համապատասխանում չափանիշներն: ԿԱՊԿՈՒ երեխաների լիարժեք ներգրավվածություն ունենալու նախապայման պետք է դառնա ընտանիք-մանկապարտեզ-պետություն համագործակցության ճիշտ ձևերի մշակումը և իրականացումը:

# ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

## 1.1 Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներգրավումը կրթական միջավայր

Աշխարհում ավելի քան մեկ միլիարդ երեխա ապրում է այս կամ այն առողջական, մտավոր, ֆիզիկական դժվարություններով: Նրանց մեկ հինգերորդը մեծ դժվարություններ են ունենում առօրյա կյանքում, կրթական, մշակութային, հասարակական կյանքում ակտիվ մասնակցելիս: Ցավոք շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, դեռևս ամբողջապես բացահայտված չէ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ճշգիրտ թիվը: Ներկայումս Հայաստանում ԿԱՊԿՈՒ երեխաների մեծ մասը դժվարությամբ է կարողանում կրթություն ստանալ իր հասակակիցների միջավայրում[3]: Ելնելով Ժան Վանյեի հետևյալ մոտեցումից, որ «Աշխարհի հիմնական սկզբունքն այն հավատն է, որ յուրաքանչյուր մարդ կարևոր է», պետք է նշել, որ այդ կարևորությունը գնահատելի պիտի դառնա հասարակության ամեն մի օղակում՝ ընտանիքում, ՆՈՒՀ-ում, կրթական հաջորդ միջավայրերում: Կրթության և զարգացման հատուկ պայմանների կարիք ունեցողների կրթություն ստանալու իրավունքը ամրագրված է ՀՀ հանրակրթության մասին օրենքով:

ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը պայմանավորված է միջազգային մի շարք առկա փաստաթղթերով[4]:

Ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում և մեթոդներում: Եվ քանի որ երեխաների կյանքում ընտանիքից հետո առաջին սոցիալական և կրթական միջավայրը նախադպրոցական հաստատությունն է, ապա մեծ է վերջինիս դերակատարումը երեխաների՝ որպես ապագա հասարակության անդամի կրթական միջավայրի համապատասխանեցման ու ապահովման կարևորագույն գործում: Նախադպրոցական տարիքի երեխաների ներառական կրթությունն իրականացվում է այն սկզբունքով, որ այդ հասակի բոլոր երեխաները կարող են հաճախել

[3] Մեյվ դը չիլդրըն, Ինչպե՞ս հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, 2017, էջ 4-5
[4] Հայկական Կարիտաս, Ներառական կրթություն, 2019, էջ 4

մանկապարտեզ: Ընդունելի են երեխաների տարբերությունները, տարիքը, սեռը, զարգացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն[5]:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն ունեն կրթություն ստանալու իրավունք: Նրանք կարող են իրենց կրթադաստիարակչական գործընթացն ապահովել ն/դ հաստատություններում, ավելին նրանք չպետք է մեկուսացված լինեն[6]: Ամերիկացի տեսաբան Ջեսսի Ջեքսոնի հետևյալ միտքը՝«Երբ բոլորը ներառված են, բոլորը հաղթում են» կարծես լրացումն ու շարունակությունն է Լիզա Ֆրիդմենի այն գաղափարի, որ «Ներառականությունը մտածողությունն է, այն հնարավորություն է սովորելու միասին և միմյանցից»:

Հայաստանում ներառական կրթությունը լինելով կրթության երիտասարդ համակարգ, դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն՝ իր առջև դեռևս դժվար հաղթահարելի և չլուծված խնդիրներ ունի: Ներկա ժամանակներում դեռևս չհաղթահարված խնդիրներ կան ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության ֆիզիկական միջավայրի համապատասխանեցման հետ կապված: Սակայն պետք է փաստել նաև այն դրական միտումը, որ ներառական կրթության վերաբերյալ շատ կարծրատիպեր արդեն կոտրվել են: Ինչպես կնշեր մարդու իրավունքների համար պայքարի ամենահայտնի գործիչ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Նելսոն Մանդելան՝ «Կրթությունը լավագույն զենքն է աշխարհը փրկելու համար»[7]:

[5] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես(2013 փետրվար), 2013թ. էջ 38-39
[6] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես(2011 մայիս), 2011թ. էջ 40
[7] Վիքիպեդիա, Գաղափարներ ներառական կրթության մասին:

1.2 Նախադպրոցական հաստատության դերը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթադաստիարակչական գործընթացում:

Ն/դ տարիքում երեխան ձեռք է բերում ընդհանուր զարգացման որոշակի մակարդակ, որը հիմք է հանդիսանում հետագայում հատուկ ուղղվածության գիտելիքների, հմտությունների և գործունեության ձևերի յուրացման համար: Ն/դ մանկության շրջանում են ձևավորվում անձնային կարևորագույն հատկություններ, որոնք հնարավորություն են տալիս երեխային ինքնահաստատվելու հասարակական կյանքում: Այս կարևորագույն փուլում հազարավոր երեխաներ այս կամ այն չափով դժվարացնում են լիարժեք մասնակցություն ունենալ կրթական գործընթացին: ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը հիմնվում է հետևյալ դրույթների վրա.

1) ԿԱՊԿՈՒ երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության հարցում:
2) ԿԱՊԿՈՒ երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական և սոցիալական ծառայություններից:
3) Երեխայի համակողմանի զարգացման տեսանկյունից նպատակային է երեխայի կրթության կազմակերպումը առանց հասարակությունից առանձնացման[8]:

Վերոնշյալին կարելի է հավելել այն, որ անհրաժեշտ է ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզի կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը փոփոխել՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ԿԱՊԿՈՒ երեխաների հնարավորություններին համապատասխան: Ն/դ կրթության կարևորությունը երեխաների ֆիզիկական, կրթական, բարոյահոգեբանական զարգացումն է: ԿԱՊԿՈՒ երեխաների համար կրթությունը պետք է լինի ճկուն, հարմարեցվեն երեխաների կարիքներին և պահանջներին[9]:

Այստեղ պետք է մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի անհատական կարողություններին, նրա հետաքրքրությունների դրսևորմանը:

Բոլոր երեխաների հնարավորությունները պետք է հավասարապես բացահայտվեն: Սրա համար անհրաժեշտ է ՆՈՒՀ-ի բոլոր գործընթացներում ստեղծել հավասար

[8] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես 2013, էջ 40
[9] Սեյվ դը չիլդրեն, Երեխաների մասնակցության ձեռնարկ, 2012, էջ 51

մասնակցության պայմաններ: Սրա հիմքում սոցիալական տեսությունն է, որը ինքնին մարդասիրության նախապայմանն է: Ոչ ակնհայտ կարիքի բացահայտումը պետք է կատարվի դաստիարակ-մանկավարժների օբյեկտիվ դիտարկման դաշտում, այն է՝ հիմք ընդունել տարիքային չափորոշիչները:

Ն/դ միջավայրում շատ կարևոր է, որ դաստիարակը պետք է կարողանա բացահայտի ԿԱՊԿՈՒ երեխայի ուժեղ և կարողունակ կողմերը, և դա օգտագործի թույլ կողմերի զարգացման համար: Շատ հաճախ դաստիարակը պետք է հմտորեն օգտագործի երեխայի հետաքրքրությունը՝ որևէ գործընթացում ներգրավելու համար:

ԿԱՊԿՈՒ երեխան շրջապատը կարող է ընկալել միայն մեծահասակի կողմից բացատրություններ տալու և ծանոթացման միջոցով: Շատ նպատակային են ԿԱՊԿՈՒ երեխաների հետ անցկացվող երկխոսությունները[10]:

Այսպիսով, ն/դ հասակի երեխայի կյանքում դաստիարակը և մանկավարժական կազմը կարևորագույն ազդեցություն կարող են ունենալ համընդհանուր ներառման գործընթացում:

[10] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես 2016թ.

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Խոսքի զարգացման պարապմունքի

պլանավորում

Թեման- Համագործակցություն, փոխօգնություն՝ հիմնված Ղ. Աղայանի «Մեղուն և աղավնին» ստեղծագրործության վրա:

Մեթոդը-զույգերով, ապա՝ փոքր խմբերով աշխատանք:

Նպատակը- կսովորեն համագործակցել և օգնել դժվարություն ունեցողներին, կզարգացնեն կապակցված խոսքը,

- Կապահովվի համապատասխան պայմաններ ԿԱՊԿՈՒ երեխաների մասնակցության համար:
- Կկիրառվի համապատասխան մեթոդ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելիս:

Միջավայրը- մեղվի, աղավնու փոքրադիր և մեծադիր նկարներ, լճի տեսարան, տերևներ և ծաղիկներ, բնական նյութերից պատրաստված խաղալիք ծերունի, խաղալիք հրացան:

Տարիքային խումբը- 3-4տ.(միջին խումբ):

Երեխաներին նստեցնել հեքիաթի ընթերցանության անկյունում այնպես, որ մասնակի տեսողության խնդիր ունեցող երեխան լինի դաստիարակի դիմաց՝ դեմքերի նույն հարթության վրա, ճիշտ ընտրված լուսավոր հատվածում:

Խթանման փուլ- բոլորին բաժանել մեղվի և աղավնու նկարներ, ըստ դրա էլ երեխաները կազմեն զույգեր: Երկխոսության մեթոդով քննարկել հետևյալ հարցերը՝ «Ինչու՞ է պետք օգնել միմյանց», «Ինչպե՞ս կօգնես ընկերոջդ, եթե նա դժվարանում է բարձրանալ աստիճանները»:

Զույգերով քննարկել, լսել մի քանի պատասխաններ:

Իմաստի ընկալման փուլ- ընթերցել ստեղծագործությունը ընդհատումներով, տալ հետևյալ հարցերը՝ ըստ տրամաբանական հատվածների՝

-Ի՞նչ էր պատահել մեղվին:

-Ի՞նչն օգնության հասավ մեղվին:

-Ինչպե՞ս օգնեց նրան աղավնին:

-Ինչի՞ մասին է ստեղծագործությունը:

Քննարկել փոքր խմբերով, լսել պատասխանը:

Ֆիզկուլտ դադար:

Կշռադատման փուլում տրամադրել նկարները և դիդակտիկ նյութերը, առաջարկել համապատասխան հերթականությամբ դասավորել:

«Դեմ առ դեմ» մեթոդով յուրաքանչյուր երեխա պատմի, թե ի՞նչ կլիներ, եթե ինքը դառնար օգնողը:

Պարապմունքն անցկացվել է Գյումրի քաղաքի «Երազանք մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի միջին խմբում: Խմբի կազմում եղել է 16 երեխա, մեկ երեխա տեսողության մասնակի խնդիրներով, մեկ երեխա՝ խոսքի զարգացման հապաղումով:

Պարապմունքին ներկա են եղել նույն հաստատության տնօրեն Նարինե Գասպարյանը, մեթոդիստ՝ Նունե Մկրտչյանը, դաստիարակ՝ Ժենյա Եղոյանը: Պարապմունքը դիտարկող կազմին հետաքրքրեց թեմայի ընտրությունը, դրա շուրջ երկխոսությամբ կարծիքի արտահայտումը: Երեխաների համար ապահովված էր մասնակցության հավասար պայմաններ, երևակայական շարադրանք, ինչն ուղղված էր կապակցական խոսքի զարգացմանը: Խոսքի զարգացման դժվարություն ունեցող երեխայի համար ընտրված էր նկարների ցուցադրումով արտահայտման, գործողության առարկայացման տարբերակը, փակ հարցերին պատասխանելը:

Տեսողության մասնակի խանգարում ունեցող երեխան ուներ հնարավորություն մեծադիր նկարների միջոցով մասնակցել պարապմունքին՝ դասավորելով համապատասխան հերթականությամբ: Կազմի կարծիքով՝ պարապմունքն ուղղված էր միմյանց հետ երկխոսելու, փոխօգնության գաղափարի ձևավորմանը, հնարավոր էր ապահովել բոլոր երեխաների մասնակցությանը:

ԿԱՊԿՈՒ երեխաներին հարմարեցված էր ներգրավվածության որոշ պայմաններ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում հիմնավորվեց այն գաղափարական պատկերացումը, որ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության հաջողությունը պայմանավորված է երեխայի ինքնուրույնության և գործելու համար անհրաժեշտ միջոցների ապահովմամբ: Զարգացման տարբեր կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի ընթացքում հարկավոր է ընտրել տարբեր մեթոդներ, դիդակտիկ պարագաներ, ուսուցման և դաստիարակության տարբեր միջոցներ: Երեխաներին ընդգրկելով համատեղ գործունեության տարբեր ձևերի մեջ՝ նրանց մղում ենք կարողությունների բացահայտման և դրսևորման: Այստեղ կարևոր է բացահայտել երեխայի ուժեղ կողմերը, նրա հետաքրքրությունները և կիրառել դրանք թույլ կողմերի հնարավոր զարգացման համար: Ինչպես նշում է տեսաբան Ջեսի Ջեքսոնը, «Երբ բոլորը նեռաված են, բոլորը հաղթում են»[11]:

Պարապմունքի անցկացման համար նպատակ է դրվել ստեղծել հնարավոր հավասար մասնակցություն, որի արդյունքում խոսքի հապաղում ունեցող երեխան կմասնակցի՝ պատասխանելով թեկուզ 2 փակ հարցերի: Տեսողության մասնակի խնդիր ունեցող երեխայի մասնակցության համար նախատեսված մեծադիր նկարները ապահովեցին պարապմունքին նրա ներգրավվածությունը:

Այս աշխատանքի կատարման վերջնարդյունքում պարզ դարձավ, որ ՆՈՒՀ-երը կարիք ունեն մանկավարժահոգեբանական կազմի և դաստիարակների փոխօգնող համագործակցության: Առաջնային գործոն պետք է դարձնել նրանց հնարավորությունների օգտագործումը՝ ի նպաստ կրթական պայմանների ապահովմանը: Այսպիսով, ներառական կրթություն իրականացնող ՆՈՒՀ-երի հիմնական նպատակը հատուկ կարիքներով երեխաների համար համատեղ գործունեության և կրթական տարբեր պահանջներով ուսուցման անհրաժեշտ պայմանների ապահովումն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

[11] Վիքիպեդիա, Տեսություններ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության մասին

1. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2013
2. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2011
3. Վորլդ Վիժն Հայաստան, ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանք, 2018
4. Սեյվ դը չիլդրեն, Ինչպես հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, 2017
5. Սեյվ դը չիլդրեն, Երեխաների մասնակցության ձեռնարկ, 2012
6. Հայկական Կարիտաս, Ներառական կրթություն, 2019
7. Wikipedia, Liza Fridman
8. Wikipedia, Theory of Inclusion.